ՋԻՆԱԻԴԱ ԲԱԼԱՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ՄԵԾ ՍՈՒՐԳՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատության էջերով, տարաբնույթ հարցերի հետ, կարմիր թելի պես անցնում են ԺԸ-ԺԹ դդ. հայ շինական տարրի, զինվորականության, հարազատ ու անհարազատ մելիքությունների տնտեսական, շինարարական, զինական, հոգեւոր եւ աշխարհիկ կյանքի պատկերները: Զուգահեռ գծվում են օտարերկրյա քաղաքական ու ռազմական ծրագրերը, վտանգները: Գիրքը շատ արժեքավոր շերտեր ունի:

ԺԳ գլուխը ներկայացնում է պատմագիտական հետաքրքիր տեղեկություններ թե՛ Իբրահիմ խանի գործադրած սարսափելի միջոցների, թե՛ հայ հարազատ մելիքների փոխհարաբերությունների, գաղթի, թե՛ անօրեն, կենտրոնախույս մելիքների գործունեության շրջանակների շուրջ՝ Աղա Մահմեդ շահի արշավանքների՝ 1795 թվականի նախօրյակին...

Միաժամանակ ցույց են տրված Արցախի մելիքների գործադրած հնարավոր զգուշացումները, մշակած ծրագրերը, դիվանագիտական, հայրենասիրական, պատերազմական հնարավոր իրադարձությունների քննումը, դրանց մասնակից լինելու կարեւորված փաստը, ռուսների՝ ռուսաց ինքնակալությունից քաղաքական հուսացումները (լինել պարսի՞ց, թե՞ ռուսաց հետ) եւ այլն: Ուսումնասիրության մեջ դեպքերի հետադարձ թվարկումով խոսվում եւ գնահատություն է տրվում հայ գաղթական տարրին, հատկապես՝ նախկինում Գանձասարի միաբան, պատմագիր, եպիսկոպոս Մելիքսեթի գործադրած նպատակին ու ջանքերին՝ յուր հոտը փրկելու եւ նրան օգտակար լինելու վերաբերյալ, հատկապես մեծ սուրգունի (գաղթ) մասին պարսից Շահ Աբաս Մեծի վարած արտաքնապես «մեղմ, բարի» քաղաքականությունը (իր հպատակ ժողովուրդների՝ այդ թվում նաեւ հայերի վերաբերյալ) ընդգծելով[1]:

Ինչպես շատ ու շատ բռնակալների կազմակերպած գաղթերին, այնպես էլ Շահ Աբաս Մեծի կողմից կազմակերպված պատմական այդ մեծ աղետին, նրա վարած ծանր ու խորամանկ քաղաքականությանը վերաբերող հայ եւ օտար պատմական աղբյուրները տարակարծիք են: Պատմիչներ Զաքարիա Սարկավագը, Գրիգոր Դարանաղցին, Առաքել Դավրիժեցին եւ ուրիշներ այլեւայլ

1 **Ապրես Բէկնազարեանց,** Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 129-139, 405: Այսուհետեւ՝ շարադրանքի մեջ:

գնահատություններ են տվել շահաբասյան արշավանքներին, գաղթին ու շահի վարած երկդիմի քաղաքականությանը: «Գաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրության մեջ եւս խոսվում է պատմական այս ծանր իրադարձությունների շուրջ: Հեղինակը որպես սկզբնաղբյուր՝ մատնանշում է ձեռագիր՝ «Գաղթականութիւնն Հայոց ի Պարսս» ուսումնասիրությունը:

«Շահ-Աբասն այս բոլոր բարութիւնը արած է ոչ եթէ առաքինութիւն գործած լինելու նպատակաւ՝ այլ այսպիսի հռչակաւոր բարերարութեամբ, գթասիրտ հիւրընկալութեամբ, պատուասէր մեծարանօք եւ կրօնական ազատութիւն տալով առ ինքն քաշել դրացի երկիրների ազգերը, թշնամեաց երկիրները դատարկելու եւ իւր երկիրը բազմամարդութեամբ լցնելու հեռատես քաղաքականութեամբ:- Շահ Աբաս Մեծի բազմադիմի հղացումները մահացու կերպով հպատակեցրին հայերին ու հրեաներին, ասորիներին, վրացիներին, Աղվանից ժողովուրդներին, որոնք նեղվել էին թուրքերից, ջալալիներից, պարսիկներից եւ որոնք,- շլացած շահի նենգ բարեսրտութեամբ եւ կեղծ հիւրասիրութեամբ [անդ, էջ 132-133], - ուղղակի եւ անուղղակի կերպով ցուցված է մեծ աշխարհակալների դարավոր մահացու, նենգավոր մտագարությունը՝ ծծել ազգերի արյունատար երակը, քաղել նրանց հանճարի ցոլանքները, ոչնչացնել նրանց ազգային դեմքը, խլել ու հեռուն շպրտել նրանց հոգուց եւ մտքերից ազատության տենչը, վսեմականը...

Նադիր շահ, Շահ Աբաս Մեծ, Շահ Աբաս Բ, Աղա Մահմեդ շահ, Աբաս Միրզա եւ այլ գահակալներ, ռուսաց կայսրեր, որոնք հաճախ եղել են հայ մելիքների, իշխանների, հայ ժողովրդի մե՛ր դահիճները, մե՛ր բարերարները, մե՛ր հայ շնորհաշատ քաջարի մելիքների նվիրվածությունը, հերոսությունն ու շնորհը, հյուրասիրությունը առատ վարձատրողները կամ՝ ուրացողները եւ այլն, եւ այլն:

Այս եւ նման հետաքրքիր ու արժեքավոր պատմական տեղեկություններ են ամփոփված «Գաղտնիք Ղարաբաղի» գրքում, որոնք հաճախ շարահարված են հետաղարձ պատմական իրադարձություններով:

Հեղինակը, խոսելով նաեւ հայրենիք վերադարձող՝ Աղվանից երկրի գաղթածների մասին, որը հաջողեցրել էր պատմագիր Մելիքսեթ եպիսկոպոսը, նշում է, որ գաղթածներից միայն չվերադարձավ յուր «պապ Մելիք-Հայկազնը... Պատճառն այս անընդհատ հաւատարմութիւնն է, որ յաջորդող շահերն բարձր պաշտօնների մէջ ընդունում են մեր տոհմի զաւակները, որք առհասարակ կոչւում են Մելիք-Հայկազեանց ազգանուամբ»[անդ, էջ 134]: Վերջինս օսմանցի թուրքերի վայրագությունների պատճառով թողել էր «իւր հայրենիք Քշտաղի Խնածախ գիւղը եւ (1586 թ.) սեպտ. գաղթել Պարսկաստան»[անդ, էջ 129]:

Գաղթում են միաժամանակ մելիքներից շատ-շատերը եւ ժողովրդի որոշ մասը:

Անշուշտ, Մելիք Մեջլումը «Գաղտնիք»-ում որպես հետաքրքիր ու հեռատես, հերոսական ու հայրենասեր պատմական եւ վիպական անհատականութ-

յուն է ներկայացված՝ յուր հռետորական գեղեցիկ խոսքով, տարբեր լեզուների (թուրքերեն, պարսկերեն, արաբերեն) իմացությամբ:

Գրքում խոսվում է այն մասին, որ ուսումնասիրության պատվիրատուն՝ մեկենասը, եղել է գնդապետ Մելիք Հայկազյանցը, որն Աբրահամին Ծակ-քարի կռիվներից սկսած, խորհուրդ է տվել պատմություն ստեղծել, որը, ըստ Աբրահամի, որդուն՝Ապրեսին տված հանձնարարության համաձայն, «կը լինի մի կարեւոր պատմութիւն»[անդ, էջ 141]:

Գնդապետը նաեւ խնդրում է յուր ազգի պատմությունը եւս գրառել ստեղծվելիք գրքում... «Այսու ամենայնիւ գրքիս Ա. հատորի Զ. գլխից սկսեալ՝ մինչեւ ԺԳ. գլուխն (եւ ԻԲ. գլխից մինչեւ ԻԸ. գլուխն) հօրս ծոցի ձեռագիր պատմութեան հետ զգուշութեամբ համեմատելով գրուեցան, որպէս զի ուղիղ լինին եւ ոչ սխալ: Հայրս իւր ձեռագիր պատմութեան առաջին մասը (այն է՝ գրքիս ԻԲ-ԻԸ գլուխները) ընդօրինակած էր Ներսէս Կաթողիկոսի մօտ Գանձասարում ձեռագիր պատմութիւններից. իսկ վերջին մասը (Զ-ԺԳ) հեղինակած էր ինքն ականատես լինելով»[անդ, էջ 140-141],- ընդգծում է Ապրես Բեկնազարյանը: Հայրը՝ Աբրահամ Բեկնազարյանը, որպես սուրբ պատգամ՝ հայրենակիցներին, ընթերցողներին ուղղված գրքում շարադրում, ընդգծում է հետեւյալը. «Հայասպանի՛ զաւակներ. ինչ որ մենք մեր աչօք տեսանք եւ մեր ականջօք լսեցինք ականատես եւ ստուգապատում անձինքներից՝ գրեցինք ձեզ համար. որպէս զի ձեր նախնեաց քաջագործութիւնները կարդալով խրախուսուիք, եւ նոցա օրինակին հետեւող լինելով՝ դուք եւս պաշտպանէք ձեզ յանձնուած Հայ-Ազգը, Հայ-Եկեղեցին»[անդ, էջ 141]:

Պատմական ճշգրիտ հղումներով բացահայտված են Աղա Մահմեդ շահի կողմից 1795թ. Ծուշիի պաշարման ու Իբրահիմին ներկայացված պահանջները: «Գաղտնիք»-ում երեւան են հանված արեւելյան բռնակալի բնավորության գծերը, տիրակալի նպատակները: Այս համապատկերին մեկնված են Բալլուջա եւ Խնածախ գյուղերի քաջերի ծածուկ հարաբերությունները բերդ-ամրոց Ծուշիի հետ: Ապա ցույց է տրված շահի սիրալիր վերաբերմունքն Ապրեսի նկատմամբ[անդ, էջ 144]:

Ապրես Բեկնազարյանը հորը թախանձում է թույլ տալ, որ տեսնի շահին, քանզի շատ հետաքրքիր էր այդ միտքը իրեն թվում: Եւ ակամայից հայ զորագնդի՝ շահին խոնարհումից հետո վերջինս տեսնում է Աբրահամի որդուն, իմանում նրա սրտի ցանկությունը, ինքն էլ հավանում է պատանուն եւ որդեգրում, քանի որ ներքինի լինելով, որդի չուներ: Նրան պատիվներ է տալիս, նշանակում ռոճիկ, անվանափոխում՝ Ալլահվերդի անվանելով: Խանը պայման է դնում, որ Ալլահվերդին յուր հոգեկիր որդին լինելով հանդերձ, պետք է անխախտ պահի յուր պապենական հավատը, լեզուն [անդ, էջ 136]: Հետաքրքիր շահական վեհանձնություն...

Մելիք Մեջլումը, որի հետ էր նաեւ Գանձակի Ջավադ խանը, պարսից խանին միաժամանակ պատմում է թե՛ վրաց Հերակլ արքայի նենգության եւ թե՛ Ղա-

ռաբաղի Իբրահիմ խանի բազում չարագործությունների, շահի հանդեպ նյութած ոճիրների, հայ անհավատարիմ մելիքների կատարած չարագործությունների մասին [10, էջ 137]:

1783 թ. ռուսաց իշխան Գրիգոր Ալեքսանդրովիչը հրաման արձակեց՝ իսպառ ջնջել Ղարաբաղի խանությունը: Հետաքրքրական են Աղա Մահմեդ շահի՝ Մելիք Մեջլումին փված մեծ արտոնություններն ու պայմանները՝ վավերացված պայմանագրի տեսքով՝ շահի կնիքով եւ ստորագրությամբ [անդ, էջ 138]:

Մելիք Մեջլումը նպատակադրվել էր Աղա Մահմեդ շահի հետ միանալով՝ ոչնչացնել Ղարաբաղի խանությունը, մահացու հարվածել նաեւ դավաճան Հերակլ արքային ու անհավատարիմ հայ մելիքներին եւ.. հայրենիքն ազատագրել:

Իսկ Շուշին՝ անառիկ Շուշին, լուռ էր մի ներքին լռությամբ՝ պարսից ահեղ զորքի ու Աղա Մահմեդ շահի եւ նրանց առաջնորդող Մելիք Մեջլումի, Ջավադ խանի հայացքների ու սպասելիքների առջեւ...

Խրոխտ եւ իմաստուն, քաջակորով էր Մելիք Մեջլումը, որի ջանքերը վասն հայրենյաց՝ վճռական ու անբեկանելի էին: Մի ներքին խորհրդով Մելիք Մեջլումի վարքը, ընդվզումը բազմաղեմ թշնամու դեմ հիշեցնում է Սմբատ Բագրատունուն՝ Խոստովանող կոչեցյալ, Աշոտ I իշխանաց իշխանի, Հայոց Բագրատունյաց թագավորության հիմնադրի քաղաքագետ հոր՝ անզուգական ու արիածին Աշոտ II-ի (Երկաթ մականվանյալ) հերոսական պապի հոր ջանքերը, երբ սպառված տեսնելով հազարաց՝ արաբների դեմ ճակատելու ջանքերը, նրանց առաջնորդեց Հայոց աշխարհի անանցանելի, անդնդախոր ձորերով՝ նրանց խստագույնս կորստյան մատնելով, այս կերպ չափելով յուր խոհեմությունը՝ հատուկ Բագրատունյաց իշխանական տոհմին ու նրա շառավիղներին:

Պատմական աղբյուրներում արաբները կոչվել են այլեւայլ անուններով, ինչպես օրինակ, իսմայելացիներ, հագարացիներ, սառակինոսներ, տաճիկներ, մըսրցիներ: Ըստ Սուրբ գրքի, արաբների նախահայրը եղել է Աբրահամը, որի կինը Սառան էր: Նրանք որդի չունեին: Աբրահամը կենակցում է յուր հարճի՝ Հագարի հետ, եւ ծնվում է Իսմայելը: Սակայն Սառան չի ցանկանում ո՛չ նորածնին, ո՛չ էլ Հագարին տեսնել: Աբրահամը վերջիններիս ուղարկում է հեռու տարածքներ, մեծ հողեր է տրամադրում: Նրանք բազմանում են՝ դառնում անթիվ-անհամար: Ազգն այդ Աբրահամի կնոջ՝ Սառայի անունից կոչվում է սառակինոսներ, հարճի՝ Հագարի անունից՝ հագարացիներ, որդու՝ Իսմայելի անունից՝ իսմայելացիներ: «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մեջ արաբների արքան կոչվել է Մըսրա Մելիք, ժողովուրդը՝ Մըսրա ժողովուրդ, երկիրը՝ Մըսր, որը Եգիպտոսն է: Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպում արաբներն անվանված են հագարացիներ եւ այլն: Արաբները մատենագրության մեջ որակված են «հանց չորրորդ զազան»...

Մելիք Մեջլումի խոսքը հայոց քաջերին, որոնք Աղա Մահմեդ շահի զորքերի հետ պաշարել էին Շուշին, հետեւյալն է. «Խնածախցի՛ եւ Պալլուճեցի՛ քաջեր,

փորձառո՛ւ եւ հաւատարիմ զօրականներս. շնորհակալութիւն ձեզ, որ մելիքաց բացակայութեանց ժամանակ փղամարդօրէն պաշտպանած էք մեր Հայրենիքը: Շնորհակալութիւն նաեւ որ մեր հրաւէրը ընդունեցիք եւ եկիք: Ձեր արիւնն կենդանարար ցօղ է Հայրենեաց համար եւ ձեր քաջութիւնն անառիկ շրջապարիսպ մեր Եկեղեցւոյ եւ կրօնի համար: Ձեր գործունէութիւնն կեանք է հայ հարազատ-իշխանութեան եւ ազգութեան, եւ ձեր վէրքերով կը բուժուին Հայրենեաց վէրքերն: Ժամանակն յղի է, շուտով ծնանելու է ձեր փառաց յաղթանակը, որով կը պսակուին դիւցազնական քաջագործութիւններն» [անդ, էջ 139-140]:

Հիրավի, հայ ժողովրդի պատմական կյանքին վերաբերող նմանատիպ երեւույթներ կան Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատության մեջ: